

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՅԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՅԱԼ ՍՏՈՐՈԳՑԱԼԻ ԱՐԴԻ ԸՄԲՈՆՈՒՄԸ

Գ. Ս. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Հայ քերականագիտության մեջ շարահյուսության առանցքային խնդիրներից մեկը ստորոգյալի հարցն է, և պատահական չէ, որ յուրաքանչյուր շարահյուսական ուսումնասիրության հեղինակ այս կամ այն չափով անպայման անդրադարձել է դրան: Բնական է, որ ստորոգյալի՝ իբրև երկկազմ նախադասության գլխավոր անդամի ըմբռնման և դասակարգման խնդիրը շատ քերականագետներ են քննության առել՝ փորձելով ի մի բերել եղած կարծիքները և վերջնական եզրակացության գալ: Այսուհանդերձ, բաղադրյալ ստորոգյալի հարցը առ այսօր մնում է շարահյուսության փիճելի խնդիրներից մեկը:

Մի կողմ թողնելով ստորոգյալի ըմբռնման ընդհանուր հարցերը՝ անդրադառնա՞նք բայական բաղադրյալ ստորոգյալի և հատկապես դիմավոր բայ + անորոշ դերբայ կապակցությունների վերաբերյալ եղած կարծիքներին, որոնք արտահայտված են վերջին տասնամյակների քերականագիտական աշխատություններում¹:

Հայտնի է, որ ստորոգյալը հայերենում դասակարգվում է պարզ և բաղադրյալ կամ բայական (պարզ ու բաղադրյալ) և անվանաբայական տարատեսակների:

Պարզ կամ բայական պարզ ստորոգյալ ընդունված է համարել միայն խոնարհված բայով (նաև երկրորդական բաղադրյալ ժամանակներով, հարադրավոր բայերով, անորոշ դերբայով և տալ բայի խոնարհված ձևերով) արտահայտված ստորոգյալները: Պարզ ստորոգյալի ըմբռնման հարցում տարակարծություններ գրեթե չկան:

Այլ է բայական բաղադրյալ կամ բարդ կոչվող ստորոգյալի խնդիրը, որն արտահայտվում է դիմավոր բայի ու անորոշ դերբայի կամ անվանաբայական ստորոգյալի ու անորոշ դերբայի կապակցությամբ:

Դիմավոր բայ + անորոշ դերբայ կառույցները հայերենի քերականությունների մեջ տարբեր գնահատումներ են ստացել:

Ա. Որոշ քերականագետներ դիմավոր բայի և անորոշ դերբայի համադրությունը համարում են բայական բաղադրյալ ստորոգյալ և ընդգծում, որ այս կապակցություններում դիմավոր բայը եղանակավորիչ, կերպավորիչ դեր է կատարում, իսկ անորոշ դերբայը դրսևորում է բուն գործողության գաղափարը²: Ջարգացնելով այս տեսակետը՝ հեղինակները (Վ. Առաքելյան, Հ. Օհանյան) բավականին ընդարձակ են ներկայացնում բաղադրյալ ստորոգյալի կազմը՝ հաշվի չառնելով դրանց բաղադրիչ

¹ Տե՛ս Ա. Արբահամյան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, Հայոց լեզու, II մաս, Եր., 1975, Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, Ս. Արբահամյան, Ն. Գառնայան, Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Եր., 1976, Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1987, Ս. Գյուլբրտդադյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1988, Ռ. Իշխանյան, Արդի հայերենի շարահյուսություն, Եր., 1986, Հ. Հարությունյան, Կառավարումը ժամանակակից հայերենում, Եր., 1983, Ս. Արբահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Եր., 1969:

² Տե՛ս Ա. Արբահամյան և ուրիշ., Հայոց լեզու, II մաս, էջ 157-159, Գ. Զահուկյան, Ըշվ. աշխ., էջ 403, 412, Ս. Արբահամյան և ուրիշ., Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, էջ 159-162, Ս. Արբահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, էջ 294:

կազմող դիմավոր բայերի ո՛չ իմաստային, ո՛չ էլ քերականական հատկանիշները: Անորոշ դերբայի հետ բաղադրյալ ստորոգյալ ձևավորող եղանակավորիչ բայերը նրանք բաժանում են մի քանի խմբերի.

ա) սկսել, շարունակել, դադարել, պատրաստվել, ցանկանալ, մտադրվել, փափագել, երագել, ուզել, կամենալ, կարողանալ

բ) ձգտել, աշխատել, փորձել, ջանալ, վճռել, հրամայել, հակվել, որոշել, ուխտել, խոստանալ, մոռանալ

գ) ստիպել, հարկադրվել, պարտավորվել, համարձակվել, համաձայնվել

դ) մտածել, վախենալ, սարսափել, խնդրել, իմանալ, սիրել

ե) գերադասել, սպառնալ, տատանվել, դժվարանալ, սպասել, շտապել³:

Թվարկված բայերի մեջ կան ներգործական սեռի բայեր, որոնց համար, սակայն, անորոշ դերբայն ուղիղ խնդիր չի դառնում (Հ. Օհանյան), այլ երկուսը միասին կազմում են բաղադրյալ ստորոգյալ, այսինքն՝ դիմավոր բայը անորոշի հետ հարադրվելիս դադարում է առանձին վերցրած ստորոգյալ լինելուց՝ կերպավորելով անորոշ դերբայի դրսևորած գործողությունը: Այս կարծիքը հիմնավորվում է նրանով, որ կան չեզոք սեռի բայեր, որոնք, բնականաբար, չեն կարող ուղիղ խնդիր առնել և նման կառույցներում դառնում են բայական բաղադրյալ ստորոգյալի բաղադրիչներ⁴:

Ակնհայտ է, որ եթե այս կառույցներում դիմավոր բայերն իսկապես միայն կերպավորիչ, եղանակավորիչ դեր կատարեին, ապա բոլոր դեպքերում անորոշ դերբայները դրանց հետ պետք է դրվեին միևնույն հոլովածևով, և դիմավոր բայերի բառական իմաստը որևէ դեր չպետք է խաղար անորոշի ձևավորման մեջ: Մինչդեռ միևնույն բայի և՛ գոյականով, և՛ անորոշ դերբայով արտահայտված հոմանիշ լրացումները հաճախ ունենում են ձևավորման ընդհանրություն. համեմատենք՝ սիրում է երգ և սիրում է երգել, ձգտում է փառքի և ձգտում է հասնելու, խուսափում է ցրտից և խուսափում է մրսելուց:

Որ դիմավոր բայերը զուտ կերպավորիչ դեր չեն կատարում, հիմնավորվում է նաև այն փաստով, որ դրանք կարող են բացի անորոշ դերբայից (որ տվյալ դեպքում խնդիր է) պահանջել այլ լրացումներ ևս՝ ըստ իմաստի. օր.՝ հարկադրում է մարդկանց հուզվել, դժվարանում է ընկերներին հայտնել, շտապում է մտերիմներին ուրախացնել և այլն: Բացի այդ, այս բայերը անորոշ դերբայ լրացում կարող են պահանջել ոչ միայն դիմավոր, այլև անդեմ ձևով. այսպես՝ ձգտում է հասնել փառքի և ձգտելով հասնել փառքի, գերադասում է թաքցնել եղածը և գերադասելով թաքցնել եղածը և այլն, և այս դեպքում, անշուշտ, անդեմ բայ + անորոշ դերբայ կապակցությունները չեն կարող կոչվել բաղադրյալ ստորոգյալներ⁵:

Վերը բերված տեսակետի հեղինակները բաղադրյալ կամ բարդ ստորոգյալ են համարում նաև անհրաժեշտական, կարելիական, պարտավորական և նման նշանակություն արտահայտող պետք է, անհրաժեշտ է, կարելի է, անկարելի է, անհնար է, կարող է, դժվար է, ապարդյուն է և նման ձևերի ու անորոշ դերբայի կապակցությունները (պետք է ժպտալ, անկարելի է պատմել, հարկավոր է մտածել, անհնար է շարունակել և այլն)⁶: Բաղադրյալ են անվանվում նաև երկու դիմավոր բայերի միացությունները, որոնք արտահայտում են բայական մի նոր՝ դարձվածային իմաստ կամ հանդես են գալիս որպես կերպային արժեք ունեցող և բուն-հատկանշային բայի կապակցություններ կամ աստիճանավորում-ուժեղացում են միևնույն իմաստը՝ իջնում - բարձրանում է, գրում - վերջացնում է, գնում - հեռանում է և այլն⁷:

Ինչպես տեսնում ենք, վերջինները զուգադրական կամ զուգաբայական հարադրություններ են, որոնք բառական մեկ միավոր են համարվում, ուստի և բաղադրյալ

³ Տե՛ս Ս. Աբրահամյան և ուրիշ., Ժամանակակից հայոց լեզու, Բ. 3, էջ 159-162:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 159:

⁵ Հմմտ. Հ. Հարությունյան, ԱԶՎ, աշխ., էջ 193:

⁶ Տե՛ս Ս. Աբրահամյան և ուրիշ., ԱԶՎ, աշխ., Բ. 3, էջ 161, Գ. Զահուկյան, ԱԶՎ, աշխ., էջ 412, Ս. Աբրահամյան և ուրիշ., ԱԶՎ, աշխ., II մաս, էջ 176:

⁷ Տե՛ս Գ. Զահուկյան, ԱԶՎ, աշխ., էջ 412, Ս. Աբրահամյան և ուրիշ., ԱԶՎ, աշխ., II մաս, էջ 157:

ստորոգյալներ լինել չեն կարող: Նույնը կարելի է ասել նաև բարդ ստորոգյալ համարվող (Գ. Ջահուկյան) տալիս է դիմավոր բայի և անորոշ դերբայի գոյգործության մասին⁶, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ պատճառական հարադրավոր բայի խոնարհված ձև՝ գրել է տալիս, պատմել է տալիս և այլն, հետևաբար և՛ պարզ բայական ստորոգյալ:

Ինչ վերաբերում է պարտավորական, կարելիական և եղանակային նման երանգներ արտահայտող պետք է, անհրաժեշտ է, կարելի է, կարող է և նման ձևերի ու անորոշ դերբայների կապակցությանը, ապա պետք է ասենք, որ դեռևս Մ. Արեղյանը սրանցում անորոշ դերբայը համարել է ենթակա, իսկ պետք է, կարելի է, կարող է՝ ստորոգյալ⁷: Այս ձևերը ևս բաղադրյալ ստորոգյալներ չեն հայերենում (ինչպես հակառակն են պնդում որոշ լեզվաբաններ՝ հետևելով ռուսական քերականությունների օրինակին), իսկ սրանցով կազմված նախադասությունները ոչ թե անդեմ, այլ գոյականական արժեք ունեցող անորոշ դերբայով արտահայտված ենթակա ու անվանաբայական ստորոգյալ ունեցող երկկազմ նախադասություններ են: Դրանում դժվար չէ համոզվել, եթե համեմատենք հետևյալ ձևերը՝ անհրաժեշտ է հմտանալ և անհրաժեշտ է հմտություն, հարկավոր է փորձել և հարկավոր է փորձ: Ակներև է, որ անհրաժեշտ է հմտություն, հարկավոր է փորձ կառույցներում առկա է ստորոգյալ և ենթակա սովորական հարաբերություն, և նույն դիրքում հանդես գալով՝ անորոշ դերբայը ևս ենթակա է դառնում: Բացի այդ, անորոշ դերբայը, նախադաս դառնալով, կարող է որոշիչ հոդ ստանալ՝ հմտանալ և անհրաժեշտ է, փորձելը հարկավոր է, և այս դեպքում նրա ենթակա լինելը կասկած չի հարուցում: Իրավացի է Մ. Ասատրյանը, երբ գրում է, որ հայերենի ոգու և կառուցվածքի տեսակետից ընդունելի է այս հարցի արեղյանական լուծումը⁸:

բ. Դիմավոր բայ + անորոշ դերբայ կապակցություններին վերաբերող մյուս տեսակետը կառուցվում է՝ հիմնվելով դիմավոր բայի սեռի քերականական կարգի վրա (Ս. Գյուլբուդաղյան, Մ. Ասատրյան): Ըստ այս կարծիքի՝ դիմավոր բայ + անորոշ դերբայ կառույցներում, որտեղ դիմավոր բայը ներգործական սեռի է, անորոշ դերբայը կատարում է ուղիղ խնդրի պաշտոն: Չեզոք սեռի բայերով արտահայտված ստորոգյալի դեպքում, երբ անորոշը չի ընդունում դիմավոր բայի թելադրած հոլովը, այսինքն՝ խնդրատական կապի մեջ չի մտնում դիմավոր բայի հետ, արդեն գործ ունենք բաղադրյալ ստորոգյալի հետ՝ աշխատում է գտնել, ջանում է դիտել, պատրաստ է տալ և այլն (Ս. Գյուլբուդաղյան): Հեղինակն ընդգծում է, որ բերված օրինակներում ստորոգյալները կա՛մ չեզոք սեռի բայերով են արտահայտված, կա՛մ բաղադրյալ են, ուստի անորոշ դերբայը ուղիղ խնդիր չի կարող լինել, թեև ստորոգյալի լրացումն է ուղիղ ձևով⁹: Ի դեպ, չեզոք սեռի մի շարք բայեր ունենում են հոմանիշ խնդիրներ՝ արտահայտված անորոշ դերբայի հոլովաձևերով և ուղիղ ձևով. այսպես՝ խուսափում է հանդիպելուց և խուսափում է հանդիպել, ձգտում է ապացուցելու և ձրգտում է ապացուցել, պատրաստվում է գնալու և պատրաստվում է գնալ, մինչդեռ այս բայերի գոյական խնդիրը պարտադիր դրվում է թեք հոլովներով: Նշանակում է՝ եթե անորոշ դերբայը դրված է ուղիղ ձևով, ուրեմն խնդրատական կապի մեջ չէ, հետևաբար և կազմում է բաղադրյալ ստորոգյալ¹⁰: Իր այս կարծիքը հիմնավորելու համար հեղինակը վկայակոչում է Գ. Սևակին, որն անորոշ դերբայն այս կառույցում անվանում է բացարձակ աներևույթ, քանի որ այդ դիրքում անորոշը հանդես է գալիս սուկ իբրև դերբայ՝ գերադասին չկապակցված: «Այս երկուսը միասին կազմում են մի բայական բաղադրյալ ստորոգյալ՝ ստորոգյալ + անորոշ առումով անորոշ դերբայ կաղապարով»¹¹:

⁶ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 414:

⁷ Տե՛ս Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 372:

⁸ Տե՛ս Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 163, Ռ. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 103-106:

⁹ Տե՛ս Ս. Գյուլբուդաղյան, նշվ. աշխ., էջ 110:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 109-110:

¹¹ Նույն տեղում, էջ 110:

Մ. Ասատրյանը, հաշվի առնելով անորոշ դերբայի երկակի էությունը (անվանական և բայական), նրա կիրառական յուրահատկություններինց ամենակարևորը համարում է դիմավոր բայի և անորոշ դերբայի ուղիղ ձևի կապակցությունը: Նա ևս ներգործական սեռի բայերի հետ անորոշի ուղիղ ձևի գործածությունը համարում է տրամաբանական ու օրինաչափ. այստեղ անորոշ դերբայն անկասկած ուղիղ խնդիր է: Ինչ վերաբերում է չեզոք սեռի բայ (անուղղակի խնդիր պահանջող) + անորոշ դերբայ կապակցություններին, ապա սրանցում անորոշը կարող է դրվել և՛ ուղիղ, և՛ թեք հոլովներով՝ ձգտում է հանդիպելու (հանդիպել), խուսափում է հանդիպելուց (հանդիպել) և այլն¹⁴: Անորոշ դերբայի ուղիղ ձևով կիրառությունները հեղինակը դժվարանում է գնահատել և բացատրում է ըստ Մ. Արեղյանի. անորոշ դերբայը՝ իբրև բայանուն, իր հոլովով կախված է խնդրատու բայից, բայց երբ այս դերբայն անհոդ է, հաճախ տրական և հայցական հոլովներն իրար հետ շփոթվում են գրաբարի և օտար լեզուների ազդեցությամբ: «Իբրև ընդհանուր կանոն պետք է իմանալ, որ անորոշ դերբայը նույն հոլովով է դրվում, ինչ հոլովով որ դրվում է ոչ դերբայ խնդիրը»¹⁵: Այսպիսով՝ չեզոք սեռի բայերի հետ անորոշի այս երկու կիրառություններն էլ Մ. Ասատրյանը համարում է անուղղակի խնդիրներ՝ ընդգծելով, որ «անանցողական բայերից կախված անորոշ դերբայն անուղղակի խնդիր է»¹⁶:

Անշուշտ, ուղիղ ձևերում դրսևորվում է անորոշ դերբայի բայական, իսկ թեք ձևերում՝ գոյականական էությունը. դրա հետևանքով է, որ առհասարակ բոլոր դերբայական ձևերին կարող ենք առաջադրել և՛ գոյականի, և՛ բայի հարցեր՝ սիրում է երգել (ի՞նչ անել և ի՞նչ), ձգտում է հասնելու (ի՞նչ անելու և ինչի՞), խուսափում է հանդիպելուց (ի՞նչ անելուց և ինչի՞ց): Պատահական չէ ուրեմն, որ խորքային կառույցում ուղղականաձև անորոշ դերբայը՝ իբրև բայանուն, տարբեր լրացական մասաներ է արտահայտում՝ ձգտում է հասնել (հանգման խնդիր), խուսափում է հանդիպել (անջատման խնդիր), ճգնում է հասկանալ (նպատակի պարագա) և այլն: Սակայն անհրաժեշտ է նշել, որ ձգտում է հանդիպել, խուսափում է հանդիպել և նման ձևերը մեր լեզվում սխալ խնդրատրայան հետևանք են, որոնք միտում ունեն դուրս մղելու թեք հոլովներով արտահայտված ձևերը (ձգտում է հանդիպելու, խուսափում է հանդիպելուց): Ակնհայտ է օտար լեզուների նմանատիպ կառույցների ազդեցությունը, որոնցում, սակայն, անորոշը (инфинитив) ընդհանրապես չի կարող հոլովվել և մշտապես ուղիղ ձևով է կապակցվում դիմավոր բայի հետ: Միանգամայն իրավացի է Ա. Պապոյանը, երբ գրում է. «... թեև դրանք տարածված են, սակայն ակնհայտ օտարաբանություն են, ռուսերենից պատճենման արդյունք (Ряд признаков)», ուստի և մերժելի են: Բնավ կարիք չկա դրանք օրինականացնել, վրան էլ տեսություն մշակել»¹⁷:

Հարկավոր է նշել մի հանգամանք ևս. անորոշ դերբայի ուղղականով խնդիր պահանջող բայերի քանակը զգալիորեն գերազանցում է թեք ձևերով լրացում առնող բայերին, և վերջինները, հաճախ ըստ զուգորդության, թեք ձևերի փոխարեն ուղղականաձև անորոշ դերբայ խնդիր են ստանում: Սա, թերևս, ներլեզվական օրինաչափ մի երևույթ է՝ միօրինակության, միաձևության ձգտելու արտահայտություն¹⁸:

Ինչ վերաբերում է առհասարակ գոյական խնդիր չպահանջող չեզոք սեռի բայերի և անորոշ դերբայի կապակցություններին (կարողացավ հասնել, աշխատում է հասնել), ապա սրանց մասին Մ. Ասատրյանը որոշակի ոչինչ չի ասում և, ընդհանրապես, իր աշխատության մեջ դիմավոր բայ + անորոշ դերբայ կառույցներին նվիրված հատվածն զգուշորեն վերնագրում է «Դիմավոր բայի և անորոշ դերբայի կապակցությունները

¹⁴ Տե՛ս Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 159:

¹⁵ Նույն տեղում, էջ 160:

¹⁶ Նույն տեղում, էջ 163:

¹⁷ Ա. Պապոյան, Ստորոգյալի ըմբռնումը հայ քերականագիտության մեջ, Բե՛Հ, 1992, թ. 2, էջ 118:

¹⁸ Հմմտ. Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 206:

և բայական բաղադրյալ (բարդ) ստորոգյալի հարցը»՝ ձեռնարհ մնալով նշված կապակցություններին որոշակի անվանում տալուց¹⁹:

գ. Երրորդ տեսակետի հեղինակները դիմավոր բայ + անորոշ դերբայ կառույցները համարում են բացառապես ստորոգյալ + խնդիր կապակցություններ (Ռ. Իշխանյան, Ն. Հարությունյան, Ա. Պապոյան)²⁰: Տրամաբանական է, որ Ռ. Իշխանյանը այս կառույցները քննում է բայական անդամի լրացումներին նվիրված բաժնում՝ նշելով, որ շարահյուսական վերլուծությունն այս դեպքում էլ պիտի հասցվի մինչև բարդ: Ակնհայտ է, որ սիրում է նստել, մոռանում է ասել, սկսեց թագավորել կառույցներում անորոշ դերբայը լրացում է՝ միայն ուղիղ խնդիր, քանի որ ա) ունենք անհրաժեշտ փոխակերպումը՝ նստելը սիրվում է, ասելը մոռացվում է, որոնցում անորոշ դերբայ խնդիրը դառնում է ենթակա, և բ) անորոշ դերբայները կարելի է փոխարինել գոյականներով, որոնք բացահայտորեն ուղիղ խնդիրներ են, ինչպես՝ սիրում եմ երգ, մոռանում եմ թվականը և այլն²¹:

Համեմատելով պատրաստվիր գործելու(ն) - պատրաստվիր գործել, համաձայնեց աշխատելու(ն) - համաձայնեց աշխատել, վախենում է հանդիպելուց - վախենում է հանդիպել և նման ձևերը՝ եզրակացնում է, որ անորոշ դերբայն անուղղակի խնդիր լինում է իբրև գոյական, և յուրաքանչյուր դեպքում առկա են միևնույն բովանդակությունն ունեցող երկու ձևի լրացումներ, նույնանիշներ՝ մի դեպքում՝ տրական և ուղղական, մյուս դեպքում՝ բացառական և ուղղական: Որ առաջինները անուղղակի խնդիր են, ապացուցվում է հետևյալ փոխակերպումներով՝ համաձայնեց աշխատելու - համաձայնեց աշխատանքի, պատրաստվիր գործելու - պատրաստվիր գործի, վախենում է հանդիպելուց - վախենում է հանդիպումից²²: Ինչ վերաբերում է պատրաստվում է գործել, համաձայնեց աշխատել, վախենում է հանդիպել, ինչպես նաև կարողանում է շարժել, կարող էր ասել (որոնք չունեն անորոշի տրականով կամ բացառականով զուգահեռ ձևերը) կառույցներին, ապա սրանց մեջ անորոշ դերբայները նա նույնպես համարում է ուղղական հոլովով դրված կամ միայն ուղիղ ձևով դրսևորված խնդիրներ: «Երկու դեպքում էլ անորոշ դերբայի ուղիղ ձևով կամ ուղղական հոլովով դրված այս լրացումները անուղղակի խնդիրներ են: Այս լրացումը պայմանականորեն անվանում ենք անորոշ անուղղակի խնդիր»²³ (ընդգծումը մերն է - Ն. Գ.):

Նույն տեսակետն է պաշտպանում Ն. Հարությունյանը՝ բայ + անորոշ դերբայ կառույցները համարելով վերլուծելի: Ըստ նրա՝ դրանք կազմված են երկու շարահյուսությների կապակցությունից, որոնք ունեն տարբեր դեր ու արժեք, քերականական տարբեր ձևավորում. մեկը գերադաս է, մյուսը՝ ստորադաս, և անկախ գերադաս բայի սեռից, դիմավորությունից, անորոշ դերբայի հոլովական ձևավորումից, առումից, երկու բայերի՝ նույն թե տարբեր ենթակամերի գործողությունը լինելուց, այս կառույցներում բավականին հստակորեն գործում է կառավարումը՝ գերադաս բայի ներխոսքիմասային իմաստի պահանջով, իսկ առանձին դեպքերում էլ անորոշ դերբայը դրվում է նաև սեռի պահանջով: Դիմավոր բայերի բառական իմաստով է պայմանավորված անորոշ դերբայի հոլովական ձևավորման բազմազանությունը, ընդ որում, նկատելի է որոշակի օրինաչափություն անորոշ դերբայի և նույն դերով գործածված գոյականի հոլովական ձևավորման հարցում²⁴: Ելնելով այս ամենից՝ Ն. Հարությունյանը բայ + անորոշ դերբայ կառույցների նկարագրությունը կատարում է ըստ կառավարվող անորոշ դերբայի հոլովական ձևավորման, որը, նրա կարծիքով, հիշյալ կառույցների տարբերակիչ հատկանիշն է²⁵:

¹⁹ Տե՛ս Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 158-163:

²⁰ Տե՛ս Ռ. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 120-121, Ն. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 188-208, Ա. Պապոյան, նշվ. աշխ., էջ 117-118:

²¹ Տե՛ս Ռ. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 194:

²² Տե՛ս նույն տեղը, էջ 208-209, 212:

²³ Նույն տեղում, էջ 220:

²⁴ Տե՛ս Ն. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 190-196:

²⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 198-208:

Այսպիսով, կատարված վերլուծությունից ելնելով, վստահաբար կարող ենք ասել, որ հայերենի դիմավոր բայ + անորոշ դերբայ կապակցությունները բոլոր դեպքերում շարահյուսորեն վերլուծելի (բայ + խնդիր) կառույցներ են: Հօգուտ այս կարծիքի են խոսում հետևյալ փաստարկները.

- Դիմավոր բայ + անորոշ դերբայ կառույցներում գերադաս բայը զուտ կերպավորիչ, եղանակավորիչ դեր չի կատարում, քանի որ անորոշ դերբայով արտահայտված ստորադաս բայը գերադասի բառական իմաստի պահանջով հոլովական բազմազան ձևավորում է ստանում:

- Բացի անորոշ դերբայով արտահայտված խնդրից, գերադաս բայն ըստ իմաստի կարող է պահանջել նաև այլ լրացումներ (հարկադրում է մարդկանց հուզվել, դժվարանում է ընկերներին հայտնել, շտապում է մտերիմներին ուրախացնել և այլն):

- Գերադաս բայը անորոշ դերբայ լրացում կարող է պահանջել և՛ դիմավոր, և՛ անդեմ ձևով (ձգտում է հասնել - ձգտելով հասնել, գերադասում է լռել - գերադասելով լռել):

- Բայ + անորոշ դերբայ կապակցություններում անորոշ դերբայները կարելի է փոխարինել գոյականներով (սիրում է երգել - սիրում է երգ, պատրաստվում է խոսելու - պատրաստվում է ելույթի, խուսափում է հանդիպելուց - խուսափում է ընկերներից)։ յուրաքանչյուր դեպքում առկա են միևնույն բովանդակությունն ունեցող նույնանիշ խնդիրներ:

- Չեզոք սեռի բայ + անորոշ դերբայ կապակցություններում անորոշ դերբայի ուղղականաձև դրսևորումը սխալ խնդրառության հետևանք է, օտար լեզուների նման կառույցների ազդեցության արդյունք:

- Ներգործական սեռի բայ + անորոշ դերբայ կառույցներում հնարավոր են հետևյալ փոխակերպումները՝ սիրում է նստել - նստելը սիրվում է, մոռանում է ասել - ասելը մոռացվում է, որոնցում անորոշ դերբայով արտահայտված ուղիղ խնդիրը դառնում է ենթակա:

- Դիմավոր բայի և անորոշ դերբայի միջև, ըստ գերադաս բայի ներխոսքիմասային իմաստի, հստակորեն գործում է խնդրառությունը (կառավարումը):

- Պարտավորական, կարելիական, անհրաժեշտական և նման այլ նշանակություն արտահայտող պետք է, անհնար է, կարող է, դժվար է, կարելի է ձևերի հետ հանդես եկող անորոշ դերբայը ենթակա է (հմտ. հարկավոր է փորձել - հարկավոր է փորձ, անհրաժեշտ է հմտանալ - անհրաժեշտ է հմտություն. նաև՝ փորձել հարկավոր է, հմտանալ անհրաժեշտ է):

Դիմավոր բայ + անորոշ դերբայ կապակցությունների վերաբերյալ մինչև օրս գոյություն ունեցող տարակարծությունները, այսպիսով, արդյունք են դրանց քերականական հատկանիշների անտեսման և օտար լեզուների նմանատիպ կազմությունների ազդեցության: Այնինչ, քննությունն ակնհայտորեն ցույց է տալիս, որ բաղադրյալ բայական կոչվող ստորոգյալը հայերենին հատուկ երևույթ չէ, և յուրաքանչյուր նման դեպքում գործ ունենք դիմավոր բայ + անորոշ խնդիր կառույցների հետ:

Г. М. НЕРСИСЯН - Современное понимание составного глагольного сказуемого в армянском языке. - В статье исследуется проблема составного глагольного сказуемого в современном армянском языке, проблема, которая до сих пор остается одним из спорных моментов синтаксиса. Рассматриваются различные концепции составного глагольного сказуемого, отраженные в языковедческих исследованиях последнего периода, дается их классификация и оценка. Приводятся доказательства в защиту того мнения, что в современном армянском языке конструкция, именуемая составным глагольным сказуемым, является результатом влияния аналогичных иноязычных конструкций, при анализе которых в каждом случае мы имеем дело со следующим составом: *личный глагол + дополнение (инфинитив)*.